ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2020 թվականի մարտի 30-ի թիվ 1/2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԳՀԾՁԲ-20/02»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար **համակարգչային, պատճենահանող սարքերի պահպանման և վերանորոգման** ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-20/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2020 թվականի մարտի 27-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2020 թվականի մարտի 30-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում

Խնդրում ենք մեզ պարզաբանել գնային առաջարկը մենք ներկայացնում ենք պայմանագրի տեխնիկական բնութագրի — գնման ժամանակացույցի թիվը, թե կցված exceli միավորի առավելագույն թիվը և դա նույնպես կցվեու է գնային առաջարկին թե ոչ:

Ինչպես նաև պարզաբանել ըստ օրենքի ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումար պետք է լինի Ձեր կողմից ներկայացված Excel ֆայլի միավոր գների հանրագումարը, բայց մրցույթի փաթեթի կնքվող պայմանագրի՝ Հավելված 1 ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրա գումար պետք է լինի excelի թիվը, բայց գրված է Կնքվելիք պայմանագրի ընդհանուր /առավելա գույն/ գինը:

Պարզաբանում

Գնային առաջարկը պետք է ներկայացվի նկատի ունենալով սույն հրավերի հավելված 6՝ պայմանագրի նախագծի Հավելված 1՝ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ-ին կից ներկայացված ցանկերում նշված միավորի գների հանրագումարը (յուրաքանչյուր չափաբաժնի համար): Միավորի գները գնային առաջարկին կից ներկայացնելու անհրաժշտություն չկա:

Սույն հրավերի հավելված 6՝ պայմանագրի նախագծի Հավելված 1՝ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ-ի <<Ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումար>> սյունակում նշված գումարները տվյալ չափաբաժնի համար նախատեսված առավելագույն նախահաշվային գներն են (տվյալ չափաբաժնի համար կնքվելիք պայմանագրի գինն է), որը, տվյալ պարագայում, կարող է չհամընկնել ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարի հետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԾՁԲ-20/02» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Օֆելյա Ասատրյանին:

Հեռախոս՝ 010-511-787:

Էլեկոտրանային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԳՀԾՁԲ-20/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: